

Ֆինանսական հաշվետվություններ Անկախ աուդիտորի եզրակացություն

«Սթիլ Կոնցեռն» ՍՊԸ

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևանի Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«Սթիլ Կոնցեռն» ՍՊԸ-ի մասնակցին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Սթիլ Կոնցեռն» ՍՊԸ (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմք

Մենք նշանակվել ենք որպես Ընկերության աուդիտոր 2025թ. մայիսին և, հետևաբար, հնարավորություն չենք ունեցել մասնակցելու 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա պաշարների ֆիզիկական գույքագրմանը: Մեզ չհաջողվեց այլընտրանքային միջոցներով ստանալ բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա պաշարների քանակների վերաբերյալ: Արդյունքում՝ մենք չենք կարողացել գնահատել, թե արդյոք առկա է 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պաշարների մնացորդը, ինչպես նաև մնացորդի հետ կապ ունեցող և 2024թ. դեկտեմբերի 31-ին ֆինանսական արդյունքում և դրամական հոսքերում ներառված գումարները ճշգրտելու անհրաժեշտություն:

Մենք աուդիտի անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԻ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ

ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:



Grant Thornton

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի
տնօրեն

Էմիլ Վասիլյան

Առաջադրանքի պատասխանատու

25 օգոստոսի 2025թ.



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2024թ.	2023թ.
Հասույթ	5	6,848,234	5,206,455
Վաճառքի ինքնարժեք	6	(6,336,258)	(4,901,518)
Համախառն շահույթ		511,976	304,937
Այլ եկամուտ		12,368	85,893
Իրացման ծախսեր	7	(191,496)	(173,506)
Վարչական ծախսեր	8	(170,045)	(135,055)
Այլ ծախսեր		(52,258)	(23,982)
Գործառնական գործունեությունից շահույթ		110,545	58,287
Ֆինանսական ծախսեր		(296,879)	(245,731)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)	9	130,939	(24,483)
Վնաս մինչև հարկերը		(55,395)	(211,927)
Շահութահարկի գծով փոխհատուցում (ծախս)	10	28,760	(27,157)
Տարվա վնաս		(26,635)	(239,084)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(26,635)	(239,084)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 38-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ		1,712	2,280
Հիմնական միջոցներ	11	2,216,427	2,029,822
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	12	99,478	132,637
Հետաձգված հարկային ակտիվներ	14	4,509	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		2,322,126	2,164,739
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	15	3,649,965	4,492,826
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	16	2,141,459	699,116
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17	127,950	29,776
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		5,919,374	5,221,718
Ընդամենը ակտիվներ		8,241,500	7,386,457

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուսպներ	18		
Կանոնադրական կապիտալ		2,258,250	2,258,250
Լրացուցիչ կապիտալ		681,135	681,135
Կուտակված վնաս		(48,125)	(21,490)
Ընդամենը սեփական կապիտալ		2,891,260	2,917,895
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ			
Վարկեր և փոխառություններ	13	3,409,374	1,927,567
Վարձակալության գծով պարտավորություն	12	78,552	109,619
Հետաձգված հարկային պարտավորություններ	14	-	25,152
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		3,487,926	2,062,338
Ընթացիկ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	19	855,845	1,266,397
Վարկեր և փոխառություններ	13	973,670	1,087,352
Վարձակալության գծով պարտավորություն	12	32,799	29,512
Ընթացիկ հարկային պարտավորություն		-	22,963
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		1,862,314	2,406,224
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		8,241,500	7,386,457

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. օգոստոսի 25-ին:

Սմբատ Խաչիկյան
Տնօրեն



Նաիրա Համբարձումյան
ՖԻՆԴԱ ՍՊԸ-ի աշխատակից

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների
բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 38-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Կանոնա- դրական կապիտալ	Պահուստային կապիտալ	Կուտակված շահույթ (վնաս)	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդ	258,250	-	217,594	475,844
Տարվա վնաս			(239,084)	(239,084)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	(239,084)	(239,084)
Թողարկված կապիտալ	2,000,000	-	-	2,000,000
Փոխառությունների իրական արժեքի ճշգրտում		681,135		681,135
Գործարքներ սեփականատերերի հետ	2,000,000	681,135	-	2,681,135
	2,258,250	681,135	(21,490)	2,917,895
Տարվա վնաս			(26,635)	(26,635)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	(26,635)	(26,635)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,258,250	681,135	(48,125)	2,891,260

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 38-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Տարվա վնաս		(26,635)	(239,084)
<i>Ճշգրտումներ՝</i>			
Մաշվածություն և ամորտիզացիա		227,194	132,263
Հիմնական միջոցների օտարումից վնաս		-	1,840
Ֆինանսական ծախս		296,879	245,731
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)		(28,760)	27,157
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ) վնաս		(130,939)	24,483
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները		337,739	192,390
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն		(1,391,952)	1,727,103
Պաշարների փոփոխություն		842,861	(2,234,727)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն		(381,067)	900,068
Գործառնական գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) դրամական միջոցներ		(592,419)	584,834
Վճարված տոկոսներ		(97,952)	(271,564)
Վճարված շահութահարկ		(23,864)	(7,755)
Գործառնական գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ		(714,235)	305,515

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2024թ.	2023թ.
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(380,072)	(1,252,742)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		(380,072)	(1,252,742)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Կապիտալի թողարկումից մուտքեր		-	2,000,000
Վարկերից և փոխառություններից և վարձակալական պարտավորությունների գծով մուտքեր/(մարումներ), զուտ	13	1,247,788	(1,224,150)
Վարձավճարներ		(41,003)	-
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		1,206,785	775,850
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)		112,478	(171,377)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա		(14,304)	(768)
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում		29,776	201,921
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա վերջում		127,950	29,776

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 38-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Աթիլ Կոնցեռն» ՍՊԸ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված
հազար հայկական (<<) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

«Սթիլ Կոնցեռն» ՍՊԸ-ն (Ընկերություն) արտադրական կազմակերպություն է, որն արտադրում է հայրենական արտադրության ցինկապատ և պոլիմերային (գունավոր) ծածկույթով թիթեղից տանիքի ծածկեր, գունային բազմազան ընտրությամբ մետաղական կոմպոզիտներ, դրանց համալրող դետալներ՝ ջրհորդան, ջրատար խողովակ, գազաթնագիծ և այլ կից աքսեսուարներ, գիպակարդոնի ցինկապատ պրոֆիլներ, ելքո դուռ պատահունի համար նախատեսված պրոֆիլներ, ավազի ու գաջի սվաղի ուղղորդիչներ, անկյունակներ, շինարարական նշանակության ցանցեր և մի շարք այլ արտադրանք: Ընկերությունն իր հումքը ներկրում է Ռուսաստանի, Պարսկաստանի, Ուկրաինայի, Հարավային Կորեայի, Ղազախստանի, Հնդկաստանի առաջատար արտադրողներից:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՍ-ներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

«Սթիլ Կոնցեռն» ՍՊԸ-ն (Ընկերություն) ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից գրանցվել է 2013թ.-ի փետրվարի 27-ին: Ընկերության 91% բաժնեմասը պատկանում է Արմեն Վաղինյանին: Հովհաննիսյանին:

Ընկերության գրանցման և իրավաբանական հասցեն է՝ Կենտրոն թաղամաս, շենք 6, բնակարան 39, ք. Հրազդան, 2301, Կոտայքի մարզ, Հայաստանի Հանրապետություն:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2024թ. կազմել է 87 մարդ (2023թ.՝ 85 մարդ):

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի կողմից (ՖՀՄՍԿ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Ընկերության շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը բախվում է մարտահրավերների՝ կապված աշխարհաքաղաքական լարվածության, մասնավորապես՝ Ադրբեյջանի կողմից շարունակվող ագրեսիայի և տարածաշրջանային անկայունության հետ: Ուկրաինայի պատերազմն էլ ավելի է բարդացրել իրավիճակը՝ առաջացնելով առևտրի խափանումներ, Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ և համաշխարհային գնաճ: Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից թուլացել է՝ ազդելով առևտրի, դրամական փոխանցումների և անվտանգության երաշխիքների վրա՝ դրդելով Հայաստանին դիվերսիֆիկացնել իր տնտեսական հարաբերությունները, թեև դա էլ իր ռիսկերն է պարունակում:

Հայկական դրամը սպասվածից ավելի ուժեղ գտնվեց՝ զսպելով գնաճը, բայց դժվարություններ ստեղծելով արտահանողների և արտարժույթային պարտավորություններ ունեցող ձեռնարկությունների համար: Համաշխարհային գնաճը և էներգիայի աճող գները ճնշում են գործադրում Հայաստանի տնտեսության վրա՝ հատկապես ներմուծումից կախվածության պատճառով:

Չնայած այս մարտահրավերներին՝ ձեռնարկությունները դիվերսիֆիկացնում են մատակարարման շղթաները և ուսումնասիրում նոր շուկաներ, իսկ կառավարության բարեփոխումների ջանքերը

երկարաժամկետ կայունության ուղի են ապահովում: Այնուամենայնիվ, Հայաստանի հաջողությունը կախված կլինի իր ձեռնարկատիրության՝ այդ ռիսկերը արդյունավետորեն նավարկելու կարողությունից:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ընկերության ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

3 Նոր և վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2024թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՄՍԽ) և ՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2023թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- «Պարզավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (<<ՄՍ 1 փոփոխություններ),
- «Վարձակալության գծով պարզավորությունը վաճառք և հեփադարձ վարձակալությամբ գործարքներում» (<<ՄՍ 16 փոփոխություններ),
- «Մաքակարարման շղթայի ֆինանսավորման մեխանիզմներ» (<<ՄՍ 7 և <<ՄՍ 7 փոփոխություններ),
- «Կովենանտով ոչ ընթացիկ պարզավորություններ» (<<ՄՍ 1 փոփոխություններ)

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- «Փոխանակելիության բացակայություն» (<<ՄՍ 21 փոփոխություն)
- «Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (<<ՄՍ 9 և <<ՄՍ 7 փոփոխություններ)
- <<ՄՍ 18 «Ֆինանսական հաշվեկշիռությունների ներկայացում և բացահայտում»
- <<ՄՍ 19 «Դուսրր ձեռնարկություններ առանց հանրային հաշվեկշիռականության. բացահայտումներ»:

4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

Ինչպես նկարագրված է Ծանոթագրություն 3-ում, Ընկերությունը վերանայել է հաշվապահական հաշվառման քաղաքականությունների իր բացահայտումը՝ համաձայն Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ Գործնական ցուցումներ 2 ստանդարտների փոփոխությունների: Բացահայտումները հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ ավելի պարզեցվել են և հստակեցվել՝ բացառելով ոչ էական հարցերի վերաբերյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունները, ինչպես նաև ընդհանուր բնույթի տեղեկատվությունը, որը միայն կրկնօրինակում է ՀՀՄՍ-ների պահանջները:

4.1 Պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա գեղչված արժեքով և հիմնական միջոցների, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքներով:

4.2 Կլիմային առնչվող հարցեր

Ընկերությունը և նրա հաճախորդները ապագայում կարող են բախվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անտառային հրդեհները, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները, և երաշտը:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ զրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, դատավարությունները, որոնք կապված են չեզոքացման կամ հարմարվելու ձախողման հետ, և որոշակի ապրանքների, արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ:

Այս ռիսկերը ստանում են աճող կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ: Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:

Ընկերությունը զգալի առաջընթաց է գրանցել՝ կլիմայական ռիսկը իր ռիսկերի շրջանակում ներառելու հարցում, ներառյալ ռիսկերի համապատասխան չափումների մշակումը և Կլիմայական ռիսկերի կոմիտեի ստեղծումը, որը պատասխանատու է ամբողջ ընկերության քաղաքականության, գործընթացների և վերահսկողության մշակման համար՝ կլիմայական ռիսկերը հիմնական ռիսկերի կատեգորիաների կառավարման մեջ ինտեգրելու նպատակով:

Բացի այդ, Ընկերությունը վերագնահատել է իր մոդելները՝ հաշվի առնելով կլիմայական ռիսկերը և դրանց ազդեցությունը վարկառուի պարտքային ռիսկի վրա: Այս տարի Ընկերությունը նաև կատարելագործել է տվյալների հավաքագրման իր համակարգերը՝ կլիմային առնչվող իր նպատակներին հասնելու համար: Օրինակ, Ընկերությունը ներդրել է մեխանիզմներ՝ հաճախորդների անցումային և ֆիզիկական ռիսկերի ենթարկվածության հետ կապված տեղեկատվության հավաքագրման և այդպիսի ազդեցության գնահատման համար՝ հասկանալու համար կլիմայական ռիսկերի ազդեցությունը կորպորատիվ հաճախորդների վրա ազդեցության ենթարկված հատվածներում: Ընկերությունը նաև զգալի առաջընթաց է գրանցել կլիմայական ռիսկի սցենարների մշակման գործում, որոնք կօգտագործվեն կանխատեսվող տեղեկատվության վրա կլիմայի ռիսկի ազդեցությունը գնահատելու համար. և բարելավելու իր աշխատակիցների գիտելիքներն ու կարողությունները՝ կլիմայական ռիսկի հետ կապված հարցերի վերաբերյալ: Թեև առաջընթաց է գրանցվել, Ընկերությունը գիտակցում է հետագա ջանքերի

անհրաժեշտությունը՝ կլիմայական գործոնները Ընկերության ռիսկերի կառավարման գնահատականներում և արձանագրություններում ամբողջությամբ ինտեգրելու գործում:

4.3 Արտարժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (<< դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: << դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (<< ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ << ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը:

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
<< դրամ/1 ԱՄՆ դոլար	396.56	404.79
<< դրամ/1 Եվրո	413.89	447.90

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

4.4 Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում թիթեղների և երկաթե կոնստրուկցիաների մանրամեծաձևի վաճառքից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1. Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
2. Բացահայտել կատարման պարտականությունները
3. Որոշել գործարքի գինը
4. Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
5. Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահի կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ մատուցելով ծառայությունը:

Մանրամասն վաճառքն իրականացվում է վաճառասրահների միջոցով, որոնք տեղակայված են Երևանում և << մարզերում:

4.5 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի:

4.6 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումները: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող սարքավորումները նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝ համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչ հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	- 20 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 1-8 տարի
Տնտեսական գույք և այլ	- 5-8 տարի

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

4.7 Վարձակալված ակտիվներ

Ընկերությունը՝ որպես վարձակալ

Ընկերությունը կնքում է վարձակալական պայմանագրեր հիմնականում առևտրային տարածքների համար:

Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն պայմանագրի գործողության սկզբում: Վարձակալության պայմանագիրն իրավունք է տալիս որոշակի ժամանակահատվածում սահմանելու որոշակիացված ակտիվի օգտագործման ուղղությունները և ստանալու որոշակիացված ակտիվից բոլոր տնտեսական օգուտները՝ փոխհատուցման դիմաց:

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Ընկերությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվն արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունն այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումն արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է գրոյի:

Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

4.8 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները՝ բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են Ծանոթագրություն 22-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ գեղջման ազդեցությունն աննշան է, գեղջում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվներն՝ օգտվելով պարզեցված մոտեցումից, և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Ընկերությունն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են Ծանոթագրություն 21-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

4.9 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

4.10 Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գույքի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Ընկերությունն ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինեն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Ընկերությունը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

4.11 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

4.12 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:
Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնեմասերի նոմինալ արժեքը:
Կուտակված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:
Սեփականատերերի հետ բոլոր գործարքներն առանձին-առանձին գրանցված են սեփական կապիտալում:
Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

4.13 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցում են ծառայություններ, Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղջված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

- (ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղջված գումարը, Ընկերությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,
- (բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

- (ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,
- (բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

4.14 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Պաշարներ

Ղեկավարությունը գնահատում է պաշարների զուտ իրացման արժեքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի ամենավստահելի ապացույցները: Այս պաշարների ապագա իրացման վրա կարող են ազդեցություն ունենալ ապագա տեխնոլոգիաները կամ շուկայով առաջնորդվող այլ փոփոխությունները, որը կարող է նվազեցնել ապագա վաճառքի գները:

Իրական արժեքի չափումը

Այն պարագայում, երբ գործող շուկաների տվյալները բացակայում են, ֆինանսական գործիքների իրական արժեքը և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման մեթոդներ: Այս գործընթացն ընդգրկում է գնահատումների և ենթադրությունների մշակում, որոնք համահունչ են նրա հետ, թե ինչպես շուկայի մասնակիցները կգնահատեին գործիքը: Ղեկավարությունն իր ենթադրությունների համար որպես հիմք է վերցնում դիտարկելի տեղեկատվությունը, սակայն այդպիսի տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի է: Այս պարագայում ղեկավարությունն օգտագործում է հասանելի լավագույն տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել հաշվետու ամսաթվի դրությամբ իրական գներից, որոնք կարող են ստացվել պարզած ձեռքի գործարքի պարագայում:

Մասնակցի անտոկոս փոխառությունների իրական արժեքը որոշվում է զեղչելով այդ փոխառությունների անվանական արժեքը՝ օգտագործելով միջին տոկոսորոշույթը 8.6%՝ ԱՄՆ դոլարով ստացված փոխառությունների դեպքում և 12.25%՝ ՀՀ դրամով ստացված փոխառությունների դեպքում: Ղեկավարությունը հավատացած է, որ այս դրույքաչափերը դիտարկելի շուկայական դրույքաչափ են:

5 Հասույթ

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ապրանքների վաճառք	6,801,611	5,155,098
Ծառայությունների մատուցում	46,623	51,357
	6,848,234	5,206,455

Ընկերության հասույթն ըստ ճանաչման ժամկետայնության ներկայացված է ստորև.

	2024թ.	2023թ.
Ժամանակի մեջ ինչ որ պահին փոխանցվող ապրանքներ	6,801,611	5,155,098
Ժամանակի ընթացքում փոխանցվող ծառայություններ	46,623	51,357
Ընդամենը	6,848,234	5,206,455

6 Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Նյութական ծախսեր	6,086,851	4,786,605
Մաշվածություն	138,461	54,354
Հատուցումներ աշխատակիցներին	79,071	54,775
Այլ	31,875	5,784
	6,336,258	4,901,518

7 Իրացման ծախսեր

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Հատուցումներ աշխատակիցներին	62,727	56,292
Վառելիք	59,163	14,204
Մաշվածություն	42,576	54,997
Այլ	27,030	48,013
	191,496	173,506

8 Վարչական ծախսեր

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Հատուցումներ աշխատակիցներին	44,282	37,689
Մաշվածություն և ամորտիզացիա	48,511	8,699
Գրասենյակային ծախսեր	14,708	14,272
Խորհրդատվական ծառայություններ	14,696	6,400
Հարկեր և տույժեր	9,294	19,206
Բանկային ծախսեր	8,562	39,195
Վառելիք	5,702	917
Գործուղման ծախսեր	3,015	8,677
Այլ	21,275	-
	170,045	135,055

9 Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)

	2024թ.	2023թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	79,876	(1,565)
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	(14,304)	(768)
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	65,367	(22,150)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)	130,939	(24,483)

10 Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)

	2024թ.	2023թ.
Ընթացիկ հարկ	901	30,718
Հետաձգված հարկ (տե՛ս Ծանոթագրություն 14-ում)	(29,661)	(3,561)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(28,760)	27,157

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Վնաս մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	(55,395)		(211,927)	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2023թ.՝ 18%)	(9,971)	18	(38,147)	18
(Չհարկվող եկամուտ) չնվազեցվող ծախսեր, զուտ	(18,789)	33.92	65,304	(30.81)
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(28,760)	51.92	27,157	(12.81)

11 Հիմնական միջոցներ

	Հոդ, շենքեր և շինու- թյուններ	Մեքենաներ և սարքավո- րումներ	Տնտեսա- կան գույք	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	389,529	589,120	111,485	105,882	1,196,016
Ավելացում	154,110	1,066,092	19,775	12,765	1,252,742
Օտարում	-	-	(3,530)	-	(3,530)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	543,639	1,655,212	127,730	118,647	2,445,228
Ավելացում	418,158	11,028	117,646	2,792	549,624
Օտարում	(202,233)	-	-	-	(202,233)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	759,564	1,666,240	245,376	121,439	2,792,619
Կուրսաված մաշվածություն և արժեզրկում					
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	18,435	211,186	29,707	58,400	317,728
Տարվա հաշվարկ	14,246	64,243	13,163	7,716	99,368
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-	(1,690)	-	(1,690)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	32,681	275,429	41,180	66,116	415,406
Տարվա հաշվարկ	11,954	150,645	18,842	12,026	193,467
Օտարման հետևանքով դուրսգրում	(32,681)	-	-	-	(32,681)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,954	426,074	60,022	78,142	576,192

	Հոդ, շենքեր և շինու- թյուններ	Մեքենաներ և սարքավո- րումներ	Տնտեսա- կան գույք	Այլ	Ընդամենը
Հաշվեկշռային արժեք					
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	510,958	1,379,783	86,550	52,531	2,029,822
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	747,610	1,240,166	185,354	43,297	2,216,427

2024թ. -ին օտարումը վերաբերում է Ընկերության պահեստների վերակառուցման նպատակով դրանց շահագործումից դուրս բերմամբ, որոնք վերակառուցվելուց հետո նոր արժեքով ճանաչվել են որպես հիմնական միջոցներ, և հաշվառվում են առանձին:

Մաշվածության գծով ծախսը բաշխվել է հետևյալ կերպ՝

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ապրանքների ինքնարժեք	138,216	51,095
Իրացման ծախսեր	42,576	31,150
Վարչական ծախսեր	12,429	2,646
Կապիտալացվող ծախսեր	246	14,477
	193,467	99,368

12 Վարձակալություն

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

	Գրասենյակային տարածք	Ընդամենը
Սկզբնական արժեք		
2023թ. հունվարի 1-ի դրությամբ		
ՖՀՄՍ 16-ին անցնելու հետ կապված ճշգրտում	165,796	165,796
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	165,796	165,796
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	165,796	165,796
Կուտակված մաշվածություն և արժեզրկում		
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-
Տարվա հաշվարկ	(33,159)	(33,159)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(33,159)	(33,159)
Տարվա հաշվարկ	(33,159)	(33,159)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(66,318)	(66,318)
Հաշվեկշռային արժեք		
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	132,637	132,637
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	99,478	99,478

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության գծով պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ընթացիկ	34,531	29,512
Ոչ ընթացիկ	76,820	109,619
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ	111,351	139,131

Ընկերությունը վարձակալել է գրասենյակային տարածք: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրածախ ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Վարձակալության փոփոխություն վճարումները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից (ինչպիսիք են, օրինակ, Ընկերության վաճառքների ծավալի հիման վրա հաշվարկվող վարձավճարները), բացառվում են վարձակալության գծով պարտավորության և ակտիվի սկզբնական չափումից: Ընկերությունը դասակարգում է իր՝ օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ (տե՛ս Ծանոթագրություն 10-ը):

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Ընկերությունը, քանի դեռ առկա չէ ակտիվն այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվն անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն:

Վարձակալության գծով պարտավորություններն ապահովագրված են համապատասխան հիմքում ընկած ակտիվներով: Ապագա նվազագույն վարձավճարները 2024թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ արտացոլված են ստորև.

	Նվազագույն վարձավճարներ	
	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Մեկ տարվա ընթացքում		
Վարձավճարներ	42,733	42,735
Ֆինանսական ծախս	(8,202)	(13,223)
	34,531	29,512
Երկրորդից հինգերորդ տարիների ընթացքում		
Վարձավճարներ	85,467	128,200
Ֆինանսական ծախս	(8,647)	(18,581)
	76,820	109,619
Զուտ ներկա արժեք	111,351	139,131

13 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

13.1 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 4.8 ում: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն՝ ըստ կատեգորիաների, ներկայացված են ստորև:

Ֆինանսական ակտիվներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	87,865	146,342
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	127,950	29,776
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	215,815	176,118

Ֆինանսական պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	4,383,044	3,014,919
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	855,845	1,232,979
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	5,238,889	4,247,898

13.2 Վարկեր և փոխառություններ

	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ապահովված բանկային վարկեր	902,470	1,087,351	315,612	483,078
Կապակցված կողմերից փոխառություններ	71,200	-	3,093,762	1,444,489
Ընդամենը վարկեր և փոխառություններ	973,670	1,087,351	3,409,374	1,927,567

Ըներությունն ունի ստացված վարկեր առևտրային բանկերից: << Էկոնոմիկայի նախարարության կողմից << կառավարության «Տնտեսության արդիականացման միջոցառումը հաստատելու մասին» որոշման համաձայն, սուբսիդավորվում են Ըներության երկու վարկերի (սուբսիդավորվող վարկերի ընդամենը գումարը՝ 1 մլրդ դրամ) տոկոսադրույքները: Նշված երկու վարկային պայմանագրերի շրջանակներում Ըներությանը տրամադրված վարկերի համար նախատեսված է 8% սուբսիդավորում: Սուբսիդավորումն իրականացվում է նշված որոշման պահանջներին համապատասխան և դրանով սահմանված պահանջներն ապահովելու դեպքում:

Վարկերն ապահովված են Ընկերության հիմնական միջոցներով և շրջանառու միջոցներով: Բանկային վարկերն ունեն 2-ից 3 տարի մարման ժամկետ և տարեկան միջինը 10.9% դրամով և 9.9% ԱՄՆ դոլարով ստացված վարկերի համար (2023թ.՝ 11.58% դրամով և 8.67% ԱՄՆ դոլարով ստացված վարկերի համար) միջին տոկոսադրույք:

Ոչ ընթացիկ վարկերի և փոխառությունների իրական արժեքները հետևյալն են.

	Իրական արժեք		Հաշվեկշռային արժեք	
	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Բանկային վարկեր	1,218,083	483,078	1,218,083	483,078
Կապակցված կողմերից փոխառություններ	3,164,962	1,444,489	3,690,495	2,122,932
	4,383,045	1,927,567	4,908,578	2,606,010

Ընթացիկ վարկերի և փոխառությունների իրական արժեքը հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ զեղչման ազդեցությունն էական չէ:

Իրական արժեքը հաշվարկվում է՝ զեղչելով դրամական միջոցների հոսքերը 11%-ով դրամային, 13.5% ռուսական ռուբլու և 8.6%-ով ԱՄՆ դոլարի հոսքերի դեպքում:

Ընկերության տոկոսային և արտարժույթային դիսկերի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 22 (ա)-ում:

14 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	(25,152)	(28,713)
Շահույթում կամ վնասում ճանաչված (ծախս) փոխհատուցում (տե՛ս Ծանոթագրություն 10)	29,661	3,561
Տարեվերջի մնացորդ	4,509	(25,152)

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Վարձակալության գծով պարտավորություններ	-	20,043	20,043
Առևտրային դեբիտորական պարտքեր	2,131	-	2,131
Վարկեր և փոխառություններ	-	27,524	27,524
Առևտրային կրեդիտորական պարտքեր	3,653	-	3,653
	5,784	47,567	53,351
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Օգտագործման իրավունքով ձեռք բերված ակտիվներ	-	(17,906)	(17,906)
Հիմնական միջոցներ	(30,936)		(30,936)

	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
	(30,936)	(17,906)	(48,842)
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ (պարտավորություններ)	(25,152)	29,661	4,509

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2023թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	2,131	2,131
Առևտրային կրեդիտորական պարտքեր	-	3,653	3,653
	-	5,784	5,784
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Հիմնական միջոցներ	28,713	2,223	30,936
	28,713	2,223	30,936
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ (պարտավորություններ)	(28,713)	3,561	(25,152)

15 Պաշարներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Հումք և նյութեր	2,982,107	4,248,482
Պատրաստի արտադրանք	437,953	74,960
Ապրանքներ պահեստում	171,874	94,289
Անավարտ արտադրանք	7,806	4,954
Վառելիք	965	9,303
Այլ	49,260	60,838
Ընդամենը պաշարներ	3,649,965	4,492,826

16 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	85,538	70,033
Պարտքային կորուստների համար պահուստ	-	(11,839)
Այլ դեբիտորական պարտքեր	2,327	88,148
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	87,865	146,342

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	1,992,501	184,450
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	61,093	368,324
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	2,053,594	552,774
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2,141,459	699,116

Պետական բյուջեից դեբիտորական պարտքերից 42,432 հազար << դրամը (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 367,672 հազար << դրամ) վերաբերում է ԱԱՀ-ին:

Առևտրային դեբիտորական պարտքերը վերաբերում են ապրանքների վաճառքից դեբիտորական պարտքերին:

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ապրանքների վաճառքից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 5 օր (2023թ.՝ 4 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

22 (բ) ծանոթագրությունում ներկայացված են պարտքային ռիսկի վերաբերյալ բացահայտումները: Տե՛ս ծանոթագրություն 22 (ա)՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

17 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները դրամարկղում ու բանկերում և մինչև 3 ամիս մարման ժամկետ ունեցող կարճաժամկետ ներդրումները՝ նվազեցված բանկային օվերդրաֆտի մնացորդով: Ֆինանսական տարվա վերջի դրությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված դրամարկղում և բանկերում մնացորդները կարող են համադրվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության հոդվածների հետ հետևյալ կերպ.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Կանխիկ միջոցներ	72,990	26,782
Բանկային հաշիվներ	54,960	2,994
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	127,950	29,776

Տե՛ս Ծանոթագրություն 22.1՝ դրամական միջոցների և դրանց համարժեքների արժույթների բացահայտման համար:

18 Սեփական կապիտալ

18.1 Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 2,258,250 հազար << դրամ (2023՝ 2,258,250 հազար << դրամ): Այն բաղկացած է հետևյալ բաժնեմասերից.

	31 դեկտեմբերի 2024թ. (%)	31 դեկտեմբերի 2023թ. (%)
Արմեն Հովհաննիսյան	91	100
Արամայիս Մկրտչյան	3	-
Դավիթ Շարոյանց	3	-
Արտակ Նիկողոսյան	3	-

18.2 Պահուստային կապիտալ

Մասնակցի անտոկոս փոխառությունների իրական արժեքի և անվանական արժեքի տարբերությունը գրանցվում է սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվությունում որպես լրացուցիչ կապիտալ: Այս փոխառությունները զեղչվել են միջինը 8.6% տոկոսադրույքով՝ ԱՄՆ դոլարով ստացված, 11.0% տոկոսադրույքով՝ ՀՀ դրամով ստացված և 13.5% տոկոսադրույքով՝ ռուսական ռուբլով ստացված փոխառությունների համար:

19 Առևտրային և կրեդիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	775,932	1,212,682
Հաճախորդներից կանխավճարներ	48,930	27,103
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	8,814	6,315
Այլ	22,169	20,297
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	855,845	1,266,397

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Ընկերության արտարժույթային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 22-ում:

20 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են հիմնական ղեկավար անձնակազմը և այլոք, ինչպես նկարագրված է ստորև:

20.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է մասնակցի կողմից, որին պատկանում է Ընկերության բաժնեմասնակցության 91%:

20.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են.

	2024թ.	2023թ.
Մասնակից		
Փոխառությունների ստացում	2,224,730	3,138,678
Փոխառությունների մարում	(677,638)	(3,856,637)
Կանոնադրական կապիտալի համալրում	-	2,000
Այլ գործարքներ	82,377	99,354

Մնացորդներ

	2024թ.	2023թ.
Մասնակից		
Ստացված փոխառություններ	2,733,858	1,421,478
Առհաշիվ տրված գումարներ	5	82,340

20.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ղեկավարությունը և նրանց անմիջական ազգականները կանոնադրական կապիտալում էական մասնակցություն չունեն:

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

	2024թ.	2023թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	8,067	5,659
Ընդամենը	8,067	5,659

21 Պայմանականություններ

21.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

22 Ֆինանսական գործիքների ռիսկ

22.1 Զուկայական ռիսկի վերլուծություն

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի և տոկոսադրույքային ռիսկի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժույթի ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում նաև արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Ընկերությունն ունի ԱՄՆ դոլարով վարկեր, ինչպես նաև ռուսական ռուբլով փոխառություններ որոնք օգտագործվում են իր գործունեությունը ֆինանսավորելու համար: Բացի այդ, Ընկերությունը հումքի մեծ մասը ներմուծում է և դրա դիմաց վճարում է հիմնականում ԱՄՆ դոլարով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանն ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

Հոդված

31 դեկտեմբերի 2024թ.	Ռուսական ռուբլի	ԱՄՆ դոլար
Ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ	153	140
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	153	140
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	116,739	1,345,513
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	116,739	1,345,513
Զուտ արդյունք	116,586	1,345,373

Հոդված

31 դեկտեմբերի 2023թ.	Ռուսական ռուբլի	ԱՄՆ դոլար
Ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ	1,256	27
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	1,256	27
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	34,920	1,022,971
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	34,920	1,022,971
Զուտ արդյունք	33,664	1,022,944

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը : 10%-ը (2023թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2023թ.՝ 10%):

Դրամի արժևորումն ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2023թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

	Ռուսական ռուբլու ազդեցությունը		ԱՄՆ դոլարի ազդեցություն	
	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.
Շահույթ կամ վնաս	11,659	3,366	134,537	102,294
	11,659	3,366	134,537	102,294

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

22.2 Պարտքային ռիսկի վերլուծություն

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է ավանդները տարբեր բանկերում պահելու միջոցով և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

22.3 Իրացվելիության ռիսկի վերլուծություն

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չգեղջված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2024թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)			
Մինչև 6 ամիս	951,501		775,932
6 ամսից մինչև 1 տարի	22,169		1,099,659
1 տարուց ավելի		3,409,374	4,908,578
	798,101	3,409,374	4,383,044

2023թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)			
Մինչև 6 ամիս	1,212,682	-	1,212,682
6 ամսից մինչև 1 տարի	20,297	1,087,352	1,107,649
1 տարուց ավելի	-	1,927,567	1,927,567
	1,232,979	3,014,919	4,247,898

Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքները հայկական դրամի, ԱՄՆ դոլարի և ռուսական ռուբլու նկատմամբ կազմել են համապատասխանաբար 11%, 8.6% և 13.5%

23 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

23.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Մասնակցից փոխառություններ տրամադրվել է Ա. Հովհաննիսյանի կողմից: Դրանք ունեն 2-7 տարի մարման ժամկետներ և անտոկոս են: Մասնակցից ստացված փոխառությունների գնահատված իրական արժեքը դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Իրական արժեքի գնահատումները որոշվում են՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկման մոտեցումը: 3,587,406 հազար << դրամ գումարը գնահատվել է՝ զեղչելով պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը 8.6% տոկոսադրույքով ԱՄՆ դոլարով, 11.35% տոկոսադրույքով << դրամ և 12% տոկոսադրույքով ռուսական ռուբլու հոսքերի դեպքում:

24 Կապիտալի ռիսկի քաղաքականություններ և ընթացակարգեր

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և մասնակիցներին բավարար եկամուտ մատակարարի:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, պահուստներն ու կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են փոխառությունները, որոնք բացահայտված են Ծանոթագրություն 18- ում:

Ընկերությունը վերահսկում է կապիտալը՝ կիրառելով «գուտ պարտքի» և «ճշգրտված սեփական կապիտալի» հարաբերակցությունը.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Զուտ պարտք		
Փոխառություններ	4,383,044	3,014,919
Հանած՝ Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(127,950)	(29,776)
	4,255,094	2,985,143
Ճշգրտված սեփական կապիտալ		
Ընդհանուր սեփական կապիտալ	2,818,846	2,917,895
	2,891,260	2,917,895
Զուտ պարտքի և ճշգրտված սեփական կապիտալի հարաբերակցության գործակից	1.47	1.02

25 Հետհաշվեկշռային իրադարձություններ

Ընկերության բաժնեմասերում 2025թ. ապրիլի 4-ին տեղի է ունեցել փոփոխություն, ըստ որի մասնակիցը՝ Ա. Հովհաննիսյանը, իր բաժնեմասը (91%) փոխանցել է Ուադիմա Իսմայիլ Ալի Մոհամեդ Ալ Հոսանիին, ով հանդիսանում է ԱՄԷ քաղաքացի, իսկ ՀՀ-ում գրանցման հասցեն է՝ ք. Երևան Ամիրյան փողոց 1:

Տվյալ իրադարձությունը ազդեցություն չունի հաշվետու տարվա ֆինանսական հաշվետվությունների վրա: